

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2017թ. օգոստոսի 30-ի նիստի

(արձ. N16)

1. Ուսումնական տարվա նախապատրաստման աշխատանքները կազմակերպելու նպատակով՝ հանձնարարել պրոռեկտոր Վ. Եղիազարյանին տեխնիկական անձնակազմի միջոցով ա.թ. սեպտեմբերի 31-ին փակցնել ողջույնի ստենդը, ապահովել շենքի մաքրման աշխատանքները,

1.1 ուսումնական տարվա սկիզբը և առաջին կուրսեցիների մուտքին ինստիտուտ նշանավորել հանդիսավոր միջոցառմամբ:

Հանդիսավոր միջոցառման ծրագրում ընդգրկել ինստիտուտի հոլովակի ցուցադրությունը, ԱԱՀ նախագահների կողմից գերազանցության դիպլոմների հանձնումը, Հ. Ղազարյանի ռեժիսորական կուրսի ավարտական ներկայացման ցուցադրումը:

Հանդիսավոր միջոցառման փորձի դիտումը նշանակել օգոստոսի 31-ին:

Սույն որոշման կատարման վերահսկողությունը հանձնարարել Է. Հեքեքյանին և Վ. Մարգարյանին:

2. Ելնելով ինստիտուտի ֆինանսական ծանր վիճակից՝

2.1 ա.թ. սեպտեմբեր ամսից ԵԹԿՊԻ-ի ռեկտորի օգնության ֆոնդից հատկացվող սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանել 60 000 դրամ,

2.2 սոցիալական օգնության դիմումները քննարկելու, դրամական օգնությունների հատկացման չափը որոշելու նպատակով ռեկտորին կից ստեղծել հանձնախումբ հետևյալ կազմով՝

-Եղիազարյան Վահան (պրոռեկտոր)

-Նալբանդյան Հենրիետա (գլխավոր հաշվապահ)

-Բերդյան Նարինե (արհկոմի նախագահ)

-Մանասերյան Էլեն (իրավախորհրդատու)

-Հարությունյան Հարություն (ՈԻԽ նախագահ)

2.3 ա.թ. սեպտեմբերից դադարեցնել ինստիտուտի աշխատակիցների հոբեյանների կապակցությամբ հատկացվող գումարային պարգևատրումները,

2.4 հանձնարարել Մանդատային հանձնաժողովին վերանայել ուսման վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձերի գեղջման քաղաքականությունը,

2.5 հանձնարարել Որակի ապահովման բաժնին վերահսկել քննաշրջանում գնահատման գործընթացի օբյեկտիվությունը:

2.6 Ռեկտորատի նիստի սույն որոշումները ներկայացնել ԳԽ քննարկմանը:

3. Հանձնարարել Վ. Եղիազարյանին և գլխավոր հաշվապահ Հ. Նալբանդյանին ուսումնասիրել համապատասխան կազմակերպության կողմից առաջարկվող սանմաքրման աշխատանքների ծառայության պայմաններն ու շահավետությունը և տալ համապատասխան եզրակացություն՝ քննարկելու ռեկտորատի առաջիկա նիստում:

-պրոռեկտորներ Վ. Եղիազարյանին և Հ. Ավագյանին՝ ուսումնասիրել BTB բանկի կողմից առաջարկվող ծառայությունների փաթեթը և տալ համապատասխան եզրակացություն քննարկելու ռեկտորատի առաջիկա նիստում:

Գլխարտուղար

Գ.Հովհաննիսյան